ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետի բ) ենթակետից հանել «կատարված» բառը.

2) ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 3-րդ կետի իբ) ենթակետը.

3) 1-ին մասի 4-րդ կետի ա) և բ) ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ա)	ապրանքային նշանի հայտը գրանցելու, հայտի նախնական փորձաքննություն անցկացնելու և դրա արդյունքներով որոշում կայացնելու համար	30
	հինգից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ	10
բ)	ապրանքային նշանի հայտի ըստ էության փորձաքննության անցկացման և դրա արդյունքներով որոշում կայացնելու համար	40
	մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ	15».

4) 1-ին մասի 4-րդ կետի գ) ենթակետում «համար» բառից հետո լրացնել «(յուրաքանչյուր առաջնային հայտով)» բառերը:

5) 1-ին մասի 4-րդ կետի ժա) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժա)	ապրանքային նշանի գրանցման և վկայագիր տրամադրելու համար	50
	հինգից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ	10».

6) 1-ին մասի 4-րդ կետի իա) ենթակետում «զատելու» բառից հետո ավելացնել «և վկայագիր տրամադրելու» բառերը.

7) 1-ին մասի 4-րդ կետի իբ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

իբ)	ապրանքային նշանի միջազգային գրանցման կամ տարածքային ընդարձակման դիմում ներկայացնելու համար	30

8) 1-ին մասի 4-րդ կետի իդ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

իդ)	ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և ապրանքային նշանների հայտերի ընթացիկ հիմնապաշարում որոնում անցկացնելու համար՝ ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան յուրաքանչյուր դասով ներկայացված ապրանքային նշանին նույնական կամ նման ապրանքային նշանների համար	20
	արագացված ընթացակարգով որոնում անցկացնելու համար	60
	մեկ իրավատիրոջը և(կամ) հայտատուին պատկանող ապրանքային նշանների համար	60».

9) 1-ին մասի 4-րդ կետում ավելացնել իզ)-լթ) նոր ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

«իզ)	Եվրասիական տնտեսական միության ապրանքային և սպասարկման նշանների հայտ (այսուհետ՝ Միության ապրանքային նշան) ներկայացնելու համար	35
իէ)	Միության կոլեկտիվ ապրանքային նշանի հայտ ներկայացնելու համար	51
իը)	Միության ապրանքային նշանի հայտի նախնական փորձաքննության փուլում ներկայացման գերատեսչության հարցմանը պատասխանելու ժամկետը երկարաձգելու համար	15
իթ)	Որպես Միության ապրանքային (կոլեկտիվ) նշան գրանցելու համար	

հայտարկված նիշի փորձաքննություն անցկացնելու համար (եթե գրանցումը խնդրարկվում է ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) մեկից - երեք դասերի համար) (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 102

երեքից ավելի յուրաքանչյուր դասի համար լրացուցիչ (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 11

իլ) Միության կոլեկտիվ ապրանքային նշանի հայտը Միության ապրանքային նշանի հայտի փոխակերպելու համար 25

լ) Միության ապրանքային նշանի հայտը միության կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպելու համար 25

լա) Միության կոլեկտիվ նշանը Միության ապրանքային նշանի փոխակերպելու համար 51

լբ) Միության ապրանքային նշանը Միության կոլեկտիվ նշանի փոխակերպելու համար 51

լգ) Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի հայտում փոփոխություն կատարելու համար 20

լդ) Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի հայտի փորձաքննության արդյունքների հիման վրա ծանուցման վերաբերյալ փաստարկներ և նկատառումներ ներկայացնելու լրացուցիչ ժամկետի տրամադրման համար 15

լե) Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանը գրանցելու և վկայագիր տրամադրելու համար 76

լզ) Միության ապրանքային նշանի միասնական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար 25

լէ) Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի տնօրինման (իրավունքի փոխանցում, լիցենզիա, ֆրանչայզինգ) գրանցում 76

լը) Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի նկատմամբ բացառիկ

իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման համար (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 180

լթ) Միության ապրանքային (կոլեկտիվ) նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման դիմում ներկայացնելու համար լրացուցիչ 6-ամսյա ժամկետ տրամադրելու համար 76».

10) 1-ին մասի 5-րդ կետում ավելացնել ժբ)-ժը) նոր ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

«ժբ) Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման հայտ ներկայացնելու և հայտարարված անվանման փորձաքննություն անցկացնելու համար 102

ժգ) Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման հայտում փոփոխություն կատարելու համար 20

ժդ) Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցման և (կամ) օգտագործման իրավունքը գրանցելու համար 102

ժե) Միության ապրանքի ծագման տեղանվան միասնական գրանցամատյանի տվյալներում փոփոխություն կատարելու համար 25

ժզ) Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման համար (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 180

ժէ) Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման դիմումի ներկայացմանը լրացուցիչ 6 ամիս ժամկետ տրամադրելու համար 76

ժը) Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքը գրանցելու և վկայագիր տրամադրելու համար (վերաբերում է այն

ապրանքի ծագման տեղանուններին, որոնք գրանցված են մինչև 2020 թվականի փետրվարի 3-ի «Եվրասիական տնտեսական միություն ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքի ծագման տեղանվան մասին» պայմանագրի ուժի մեջ մտնելը) (վճարում յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչություն) 51».

11) 8-րդ կետի զ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննության դիմում ներկայացնելու և քննությունն ընդունելու համար 20».

12) 8-րդ կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

թ) լիցենզիայի, ենթալիցենզիայի, իրավունքների փոխանցման (զիջման) գրանցման կամ գրանցումը մերժելու մասին լիազոր մարմնի որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար 50».

Հոդված 2. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ կետերը չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական լիազոր մարմին կամ բողոքարկման խորհուրդ ներկայացված հայտերի և դիմումների վրա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացումը բխում է ԵՏՄ ապրանքային նշանների պայմանագրի 25-րդ հոդվածից, համաձայն որի Անդամ

պետությունները սահմանում են Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման դեպքում իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակները, ինչպես նաև իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման ժամանակ վճարվող տուրքերի չափերը՝ ելնելով Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման դեպքում իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակների ցանկից և իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման համար տուրքերի դրույքաչափերից, որոնք հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Վերը նշված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման ժամանակ վճարվող տուրքերի չափերի առնչությամբ անդամ պետությունների օրենսդրության մեջ փոփոխությունների կատարումն իրականացվում է անդամ պետությունների կողմից, տուրքերի դրույքաչափերի փոփոխությունների հիման վրա, որոնք հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Անդամ պետությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովին գրավոր ծանուցում են իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակները և տուրքերի չափերն իրենց օրենսդրության մեջ սահմանելու մասին:

Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, Եվրասիական տնտեսական միության սպասարկման նշանների և Եվրասիական տնտեսական միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պաշտպանության և օգտագործման ժամանակ իրավական նշանակություն ունեցող գործողությունների տեսակների ցանկը և այդպիսի իրավական նշանակություն ունեցող գործողությունների համար տուրքերի դրույքաչափերը սահմանվում են ԵՏՄ ապրանքային նշանների պայմանագրի Հրահանգի (այսուհետ՝ Հրահանգ) համաձայն:

Համաձայն Հրահանգի՝ եթե Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունը Պայմանագրի 25-րդ հոդվածում նշված տուրքերի չափը սահմանում է շվեյցարական ֆրանկից տարբեր արժույթով, ապա այդ պետությունը տուրքերը սահմանում է ելնելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի՝ ԵՏՄ ապրանքային նշանների պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ շվեյցարական ֆրանկի փոխարժեքով (Հրահանգից քաղվածքը կցվում է):

2. Առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերոգրյալը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Նախագծում ավելացվել են տուրքերի նոր դրույքաչափեր՝ ԵՏՄ ապրանքային նշանների պայմանագրին համապատասխան: Ինչպես նաև հստակեցվել են գանձվող պետական տուրքերի անվանումները, փոփոխություններ են կատարվել տուրքերի դրույքաչափերում: Մասնավորապես՝ փոփոխվել են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իբ) ենթակետով սահմանված տուրքի դրույքաչափը, որը նվազեցվել է, քանի որ նախկին դրույքաչափում ներառված էր նաև Մտավոր սեփականության գրասենյակի կողմից միջազգային հայտերի թղթային (փոստով) առաքման գումարը: Սակայն այժմ Մտավոր սեփականության գրասենյակի կողմից նման ծառայություն չի իրականացվում (հայտերը ուղարկվում են էլեկտրոնային եղանակով): Բարձրացվել է 18-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի զ) ենթակետով նախատեսված արտոնագրային հավատարմատարի թեկնածուի որակավորման քննության դիմում ներկայացնելու և քննությունն ընդունելու համար նախատեսված պետական տուրքի դրույքաչափը՝ սահմանելով 20000 դրամ (նախկին 8000 դրամի փոխարեն): «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 1-ին մասից հանվել են կրկնվող ենթակետը՝ մասնավորապես 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի բ) և իբ) ենթակետերը կրկնվում են:

Ապրանքային նշանի փորձաքննության լրացուցիչ տուրք սահմանելու անհրաժեշտությունն առաջացել է այն բանից հետո, երբ հայտատուները, հատկապես նրանք ովքեր պետական տուրքը վճարում են նվազեցված դրույքաչափով, ապրանքային նշանը գրանցման են ներկայացնում ԱԾՄԴ 45 դասում ընդգրկված բոլոր ապրանքների ու ծառայությունների համար, անկախ նրանից օգտագործելու են ապրանքային նշանը այդ բոլոր ապրանքների և ծառայությունների համար, թե՝ ոչ: Ապրանքների ու ծառայությունների

ամբողջական ցանկը ծավալուն է, մոտ 145 էջ և 31700 բառ: Կատարվում է մեծ ծավալի աշխատանք ինչպես հայտը հիմնապաշար մուտքագրելիս և հայտի նախնական փորձաքննության ընթացքում ներկայացված ապրանքների և ծառայությունների ցանկի համապատասխանությունն ԱԾՄԴ-ի դասերին ստուգելիս, այնպես էլ «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում հայտը, ինչպես նաև ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները հրապարակելիս: Լրացուցիչ տուրք սահմանելով, ակնկալում ենք նվազեցնել չհիմնավորված գրանցումները, միևնույն ժամանակ չկրճատելով հայտերի ընդհանուր թիվը և բյուջետային մուտքերը: Նման մոտեցում կիրառվում է նաև միջազգային պրակտիկայում, ինչպես նաև ԵԱՏՄ մի շատ երկրներում, մասնավորապես՝ Ռուսատանի Դաշնությունում, Բելառուսում և Ղազախստանում:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի «Պետական տուրքի մասին» օրենքի մի շարք դրույթների համապատասխանեցումը «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով և «Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» պայմանագրով նախատեսված դրույթներին:

Բացի այդ, Օրենքի ընդունմամբ կբարելավվի Օրենքի կիրարկման արդյունավետությունը, կապահովվի դրանով սահմանված դրույթների միանշանակ կիրառման հնարավորությունը, ինչպես նաև պրակտիկայում առաջացած խնդիրների լուծումները:

4. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:

Նախագծի կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարությունների հետ բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ

ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում չի նախատեսվում: